ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/43

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Մովսեսյանի (լիազորագիր, տրված՝ 10.05.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.05.2019թ. թիվ 26/26-1/7307-2019 գրությամբ «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 26.04.2019թ. թիվ 01.3/11/10673-19 գրության հիման վրա, 03.05.2019թ. թիվ 26/26-1/7307-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել

«ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ ոստիկանության կարիքների համար դիզելային գեներատորի ձեռքբերման համար մեկ չափաբաժնով կազմակերպված ընթացակարգին, մասնակցության հայտ է ներկայացրել «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն, որը 28 000 000 ՀՀ դրամ նախահաշվային գնով դիզելային գեներատորի համար առաջարկել է 14 500 000 ՀՀ դրամ: Առաջարկելով նվազագույն գնային առաջարկ Ընկերության կողմից ներկայացվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (հետայսու նաև՝ Կարգ) նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: ՀՀ ոստիկանության գնահատող հանձնաժողով 14.04.2019թ. գրությամբ ներկայացրել է, որ «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 6 և 6.1-ը չի համապատասխանում հրավերի պահանջներին, չհայտնելով որևէ ավել մեկնաբանություն, տվել է մեկ աշխատանքային օր շտկման համար:

Նույն գրությամբ հայտնել է նաև, որ «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի համար մինչև հիմա անհասկանալի է թե ինչպես կարող է Ընկերությունը շտկել հավելված 6 և 6.1-ում տեղ գտած անհամապատասխանությունը, եթե ՀՀ ոստիկանությունը թիվ 3 արձանագրությունով չի տվել մանրամասն տեղեկատվություն ապրանքի տեխնիկական բնութագրի անհամապատասխանության վերաբերյալ և ըստ այդմ էլ Ընկերության համար պարզ չի եղել, թե որն է անհամապատասխանությունը:

Միևնույն ժամանակ «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Աղիկյանը նույն գրությամբ խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հիմք չընդունել գնումների բողոքի նիստի ժամանակ Ընկերության լիազորված անձի կողմից ներկայացված դիրքորոշումը և հիմք ընդունել սույն գրությամբ ներկայացվածը:

«ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/43 ընթացակարգի շրջանակներում 10.05.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.04.2019թ. թիվ 01.3/11/10673-19 գրությամբ՝ ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով, ներկայացրել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԴԻԶ-ԳԵՆԵՐԱՏՈՐ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/43 ընթացակարգի շրջանակներում 10.05.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2019/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2019/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Պատվիրատուի կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար դիզելային գեներատորի ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԴԻԶ-ԳԵՆԵՐԱՏՈՐ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրությամբ Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, որոշել է ծանուցել «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.04.2019թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերն ըստ հրավերի հավելված 6 և 6.1 չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

Նույն արձանագրությամբ սահմանվել է, որ «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին տրվում է մեկ աշխատանքային օր վերոնշյալ անհամապատասխանությունը շտկելու համար:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.04.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել շտկված 6 և 6.1 հավելվածները հրավերով պահանջված կարգով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2019թ. թիվ 26/26-1/7307-2019 գրությունը, ՀՀ ոստիկանության 26.04.2019թ. թիվ 01.3/11/10673-19 գրությունը և կից փաստաթղթերը, «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ՆԳ-2019/43 ընթացակարգի շրջանակներում ներկայացված գրությունը , հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

5. առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ, 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

46. Սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: ***Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում***

<u>հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ Պատվիրատուի կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար դիզելային գեներատորի ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԴԻԶ-ԳԵՆԵՐԱՏՈՐ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ ներկայացրած «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և ծանուցվել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.04.2019թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերն ըստ հրավերի հավելված 6 և 6.1 չեն համապատասխանել հրավերով նախատեսված

պահանջներին: Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին տրվել է մեկ աշխատանքային օր վերոնշյալ անհամապատասխանությունը շտկելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.04.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել շտկված 6 և 6.1 հավելվածները հրավերով պահանջված կարգով:

Այսպիսով, Կարգի 46-րդ հոդվածով սահմանվում է, որ ***ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Պատվիրատուն «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտի 6.1 հավելվածում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրելով անհամապատասխանություն պետք է ղեկավարվեր Կարգի 46-րդ կետով և հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրեր հայտնաբերված անհամապատասխանությունները, մինչդեռ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 46-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդհանրապես չի նկարագրել հայտնաբերված անհամապատասխանությունը, որպիսի պայմաններում Ընկերության համար անհասկանալի է եղել թե կոնկրետ ինչ անհամապատասխանություն է առկա հայտի 6.1 հավելվածում:

Գտնում եմ, որ նման պայմաններում Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված է եղել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելուց, ուստի ստանձնած պարտականության չկատարումը տվյալ

պայմաններում պայմանավորված է եղել Ընկերության կամքից և վարքագծից անկախ հանգամանքներով:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԴԻԶ-ԳԵՆԵՐԱՏՈՐ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.05.2019թ. թիվ 26/26-1/7307-2019 գրությամբ «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**